Հավելված
ՀՀ Սյունիքի մարզի Կապան համայնքի ղեկավարի
2024թ. հունիսի 19-ի թիվ 984-Ա որոշման

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապանի համայնքապետարանը հայտարարում է մրցույթ՝ համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների տնօրենների հետևյալ թափուր պաշտոնները զբաղեցնելու համար.

1.«Կապանի թիվ 3 նախադպրոցական ուսումնական հաստատություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրեն.

Կազմակերպության գտնվելու վայրն է՝ ՀՀ Սյունիքի մարզ, քաղաք Կապան Լեռնագործների փողոց 16/2

Թափուր պաշտոնի հիմնական աշխատավարձի չափը 212040 (երկու հարյուր տասներկու հազար քառասուն) ՀՀ դրամ է:

2.«Կապանի թիվ 9 նախադպրոցական ուսումնական հաստատություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրեն.

Կազմակերպության գտնվելու վայրն է՝ ՀՀ Սյունիքի մարզ, քաղաք Կապան Շահումյան փողոց 8

Թափուր պաշտոնի հիմնական աշխատավարձի չափը 212040 (երկու հարյուր տասներկու հազար քառասուն) ՀՀ դրամ է:

3.«Կապանի «Դավիթ Բեկ» նախադպրոցական ուսումնական հաստատություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրեն.

Կազմակերպության գտնվելու վայրն է՝ ՀՀ Սյունիքի մարզ, Կապան համայնք, գյուղ Դավիթ Բեկ

Թափուր պաշտոնի հիմնական աշխատավարձի չափը 170400 (մեկ հարյուր յոթանասուն հազար չորս հարյուր) ՀՀ դրամ է:

4.«Կապանի «Ծավ» նախադպրոցական ուսումնական հաստատություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրեն.

Կազմակերպության գտնվելու վայրն է՝ ՀՀ Սյունիքի մարզ, Կապան համայնք, գյուղ Ծավ

Թափուր պաշտոնի հիմնական աշխատավարձի չափը 170400 (մեկ հարյուր յոթանասուն հազար չորս հարյուր) ՀՀ դրամ է:

- ***1-4 կետերում նշված թափուր պաշտոնները գործառույթներն են՝***

_ իրականացնում է կազմակերպության ընթացիկ գործունեության կառավարումն ու ղեկավարումը՝ այդ թվում՝ կազմակերպում է յուրաքանչյուր սանի կրթությունը նախադպրոցական կրթական ծրագրեր իրականացնելու միջոցով, ապահովում է հաստատությունում ընդգրկված սաների ներդաշնակ զարգացումն ու դաստիարակությունը, առողջության ամրապնդումն ու խնամքը, մայրենի լեզվով հաղորդակցվելու և դրա հիմքի վրա օտար լեզուների տիրապետման նախադրյալները, հաշվելու տարրական կարողությունների զարգացումը, վարվեցողության տարրական կանոններին, հայրենի բնության և բնապահպանության, պատմության և ազգային մշակույթի տարրերին ծանոթացումը, երեխայի մտավոր, բարոյական, գեղագիտական և ֆիզիկական զարգացման հիմքերի ստեղծումը, հայրենիքի նկատմամբ սիրո և նվիրվածության զգացման ձևավորումը, աշխատանքային տարրական կարողությունների և հմտությունների ծանոթացումը, զարգացման շեղումների կանխարգելումն ու շտկումը, դպրոցական ուսուցման նախապատրաստումը:

Իրականացնում է «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքով, այլ իրավական ակտերով և կազմակերպության կանոնադրությամբ սահմանված այլ լիազորություններ:

- ***1-4 կետերում նշված թափուր պաշտոնները զբաղեցնելու համար՝***

Մրցույթին մասնակցելու իրավունք ունեն տվյալ պաշտոնը զբաղեցնելու համար ներկայացվող պահանջները բավարարող Հայաստանի Հանրապետության այն գործունակ չափահաս քաղաքացիները, ովքեր ունեն՝

1) բարձրագույն կրթություն.

2) «Նախադպրոցական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածով նախատեսված կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգով վերապատրաստված և նախադպրոցական ուսումնական հաստատության ղեկավարման իրավունք (հավաստագիր).

3) հանրային ծառայության առնվազն չորս տարվա ստաժ կամ առնվազն հինգ տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ համապատասխան բնագավառի առնվազն երեք տարվա աշխատանքային ստաժ, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ.

4)պարտականությունների կատարման համար անհրաժեշտ իրավական ակտերի իմացություն (Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն, Աշխատանքային օրենսդրության, համապատասխան ոլորտի Հայաստանի Հանրապետության օրենսդրություն, «Տեղական ինքնակառավարման մասին», «Գնումների մասին», «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքների և այլն):

Տնօրենի ընտրության լրացուցիչ պայմաններն են՝

1) տրամաբանելու և տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.

2) ֆինանսատնտեսական գործունեության իրականացման կարողություն.

3) համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն.

4) աշխատանքի 'կազմակերպման և ղեկավարման անհրաժեշտ հմտություններ.

5) ենթակաների հետ վարվելու անհրաժեշտ էթիկայի կանոնների իմացություն.

6) առնվազն մեկ օտար լեզվի իմացություն:

5. Կապան քաղաքի աթլետիկայի մասնագիտացված մանկապատանեկան մարզադպրոց համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրեն.

Կազմակերպության գտնվելու վայրն է՝ ՀՀ Սյունիքի մարզ, քաղաք Կապան, Մինաս Պապյան փողոց 1Ա

Թափուր պաշտոնի հիմնական աշխատավարձի չափը 212040 (երկու հարյուր տասներկու հազար քառասուն) ՀՀ դրամ է:

6.Կապան քաղաքի Դավիթ Համբարձումյանի անվան մանկապատանեկան մարզադպրոց համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրեն.

Կազմակերպության գտնվելու վայրն է՝ ՀՀ Սյունիքի մարզ, քաղաք Կապան, Մինաս Պապյան փողոց 1Ա

Թափուր պաշտոնի հիմնական աշխատավարձի չափը 212040 (երկու հարյուր տասներկու հազար քառասուն) ՀՀ դրամ է:

7.Կապան քաղաքի մարմնամարզության մանկապատանեկան մարզադպրոց համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրեն.

Կազմակերպության գտնվելու վայրն է՝ ՀՀ Սյունիքի մարզ, քաղաք Կապան, Թումանյան փողոց 10

Թափուր պաշտոնի հիմնական աշխատավարձի չափը 212040 (երկու հարյուր տասներկու հազար քառասուն) ՀՀ դրամ է:

- ***5-7 կետերում նշված թափուր պաշտոնները գործառույթներն են՝***

1)իրականացնում է կազմակերպության ընթացիկ գործունեության կառավարումն ու ղեկավարումը, հանդես է գալիս հաստատության անունից, ներկայացնում նրա շահերը և կնքում գործարքներ:

2)նախագահում է հաստատության մանկավարժական խորհրդի նիստերը

3)ՀՀ օրենսդրությամբ, հիմնադրի որոշումներով և հաստատության կանոնադրությամբ տնօրինում է հաստատության գույքը, այդ թվում ֆինանսական միջոցները

4)աշխատանքի նշանակում ու աշխատանքից ազատում է հաստատության աշխատակիցներին,նրանց նկատմամբ կիրառում խրախուսական միջոցներ և նշանակում կարգապահական տույժեր

5)բանկերում բացում է հաշվարկային հաշիվներ

6)օրենքով և կանոնադրությամբ սահմանված իր լիազորությունների սահմաններում արձակում է հրամաններ և վերահսկում դրանց կատարումը,

7) իրականացնում է մանկավարժական կադրերի և սպասարկող անձնակազմի ճիշտ ընտրություն և անհրաժեշտ պայմաններ ստեղծում նրանց մասնագիտական մակարդակի բարձրացման համար,

8)վերահսկողություն է իրականացնում հաստատության աշխատողների կողմից իրենց աշխատանքային պարտականությունների կատարման նկատմամբ,

9)ապահովում է ներքին աշխատանքային կարգապահական կանոնների, աշխատանքի պաշտպանության և անվտանգության տեխնիկայի պահպանումը

10)կազմում է հաստատության հաստիքային ցուցակը և ծախսերի նախահաշիվը ու դրանք ներկայացնում կառավարման մարմինների հաստատմանը

11)հաստատությունում կազմակերպում է մեթոդական աշխատանքը, կազմում է ուսումնական պարապմունքների դասացուցակ և ուսումնադաստիարակչական աշխատանքի մասին հաշվետվություններ

12)ընդհանրացնում և տարածում է լավագույն մարզիչների աշխատանքիդրական փորձը, մարզիչներին հաղորդակից դարձնում սպորտի, գիտության և մանկավարժության նորագույն նվաճումներին:

Իրականացնում է «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքով, այլ իրավական ակտերով և կազմակերպության կանոնադրությամբ սահմանված այլ լիազորություններ:

8.Կապան քաղաքի մշակույթի կենտրոն համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրեն.

Կազմակերպության գտնվելու վայրն է՝ ՀՀ Սյունիքի մարզ, քաղաք Կապան, Չարենցի փողոց, 1

Թափուր պաշտոնի հիմնական աշխատավարձի չափը 212040 (երկու հարյուր տասներկու հազար քառասուն) ՀՀ դրամ է:

9.Կապան քաղաքի ակումբագրադարանային միավորում համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրեն.

Կազմակերպության գտնվելու վայրն է՝ ՀՀ Սյունիքի մարզ, քաղաք Կապան, Չարենցի փողոց, 1

Թափուր պաշտոնի հիմնական աշխատավարձի չափը 212040 (երկու հարյուր տասներկու հազար քառասուն) ՀՀ դրամ է:

10.Կապան քաղաքի մանկապատանեկան ստեղծագործության կենտրոն համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրեն.

Կազմակերպության գտնվելու վայրն է՝ ՀՀ Սյունիքի մարզ, քաղաք Կապան, Ռ.Մելիքյան փողոց, 8

Թափուր պաշտոնի հիմնական աշխատավարձի չափը 212040 (երկու հարյուր տասներկու հազար քառասուն) ՀՀ դրամ է:

11.Կապան քաղաքի գեղարվեստի մանկական դպրոց համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրեն.

Կազմակերպության գտնվելու վայրն է՝ ՀՀ Սյունիքի մարզ, քաղաք Կապան, Լեռնագործների փողոց, 8

Թափուր պաշտոնի հիմնական աշխատավարձի չափը 212040 (երկու հարյուր տասներկու հազար քառասուն) ՀՀ դրամ է:

12.Կապան քաղաքի թանգարանների միավորում համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրեն.

Կազմակերպության գտնվելու վայրն է՝ ՀՀ Սյունիքի մարզ, քաղաք Կապան, Ռ.Մելիքյան փողոց, 8

Թափուր պաշտոնի հիմնական աշխատավարձի չափը 212040 (երկու հարյուր տասներկու հազար քառասուն) ՀՀ դրամ է:

13.Կապան քաղաքի հաշվապահական ծառայությունների կենտրոն համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրեն.

Կազմակերպության գտնվելու վայրն է՝ ՀՀ Սյունիքի մարզ, քաղաք Կապան, Ռ.Մելիքյան փողոց, 8

Թափուր պաշտոնի հիմնական աշխատավարձի չափը 212040 (երկու հարյուր տասներկու հազար քառասուն) ՀՀ դրամ է:

14.«Կապանի պլաստշին» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրեն.

Կազմակերպության գտնվելու վայրն է՝ ՀՀ Սյունիքի մարզ, քաղաք Կապան, Գործարանային փողոց, 15

Թափուր պաշտոնի հիմնական աշխատավարձի չափը 249260 (երկու հարյուր քառասունինը հազար երկու հարյուր վաթսուն) ՀՀ դրամ է:

- ***8-14 կետերում նշված թափուր պաշտոնները գործառույթներն են՝***

1)իրականացնում է կազմակերպության ընթացիկ գործունեության կառավարումն ու ղեկավարումը, հանդես է գալիս հաստատության անունից, ներկայացնում նրա շահերը և կնքում գործարքներ:

2)սահմանում է կազմակերպության կառուցվածքային ստորաբաժանումների իրավասությունները

3)ՀՀ օրենսդրությամբ, հիմնադրի որոշումներով և հաստատության կանոնադրությամբ տնօրինում է հաստատության գույքը, այդ թվում ֆինանսական միջոցները

4)աշխատանքի նշանակում ու աշխատանքից ազատում է հաստատության աշխատակիցներին,նրանց նկատմամբ կիրառում խրախուսական միջոցներ և նշանակում կարգապահական տույժեր

5)բանկերում բացում է հաշվարկային հաշիվներ

6)օրենքով և կանոնադրությամբ սահմանված իր լիազորությունների սահմաններում արձակում է հրամաններ և վերահսկում դրանց կատարումը,

7) իրականացնում է աշխատանքի բաշխում կազմակերպության աշխատողների միջև ու անհրաժեշտ պայմաններ ստեղծում նրանց մասնագիտական մակարդակի բարձրացման համար,

8)վերահսկողություն է իրականացնում հաստատության աշխատողների կողմից իրենց աշխատանքային պարտականությունների կատարման նկատմամբ,

9)ապահովում է ներքին աշխատանքային կարգապահական կանոնների, աշխատանքի պաշտպանության և անվտանգության տեխնիկայի պահպանումը

10)կազմում է հաստատության հաստիքային ցուցակը և ծախսերի նախահաշիվը ու դրանք ներկայացնում կառավարման մարմինների հաստատմանը.

Իրականացնում է «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքով, այլ իրավական ակտերով և կազմակերպության կանոնադրությամբ սահմանված այլ լիազորություններ:

- ***5-14 կետերում նշված թափուր պաշտոնները զբաղեցնելու համար՝***

Մրցույթին մասնակցելու իրավունք ունեն տվյալ պաշտոնը զբաղեցնելու համար ներկայացվող պահանջները բավարարող Հայաստանի Հանրապետության այն գործունակ չափահաս քաղաքացիները, ովքեր ունեն՝

1) բարձրագույն կրթություն.
2) հանրային ծառայության առնվազն չորս տարվա ստաժ կամ առնվազն հինգ տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ համապատասխան բնագավառի առնվազն երեք տարվա աշխատանքային ստաժ.
3) արտադպրոցական կրթադաստիարակչական ուսումնական հաստատության տնօրենի դեպքում՝ ՀՀ կառավարության 2022 թվականի ապրիլի 22-ի թիվ 539-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 3-րդ կետով սահմանված պահանջները բավարարող անձը:
4)պարտականությունների կատարման համար անհրաժեշտ իրավական ակտերի իմացություն (Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն, Աշխատանքային օրենսդրության, համապատասխան ոլորտի Հայաստանի Հանրապետության օրենսդրություն, «Տեղական ինքնակառավարման մասին», «Գնումների մասին», «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքների և այլն):
Տնօրենի ընտրության լրացուցիչ պայմաններն են՝
1) տրամաբանելու և տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.
2) ֆինանսատնտեսական գործունեության իրականացման կարողություն.
3) համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն.
4) աշխատանքի կազմակերպման և ղեկավարման անհրաժեշտ հմտություններ.
5) ենթակաների հետ վարվելու անհրաժեշտ էթիկայի կանոնների իմացություն.
6) առնվազն մեկ օտար լեզվի իմացություն:

Մրցույթը կկայանա 2024 թվականի հուլիսի 23-ին ժամը 10:00-ին, Կապանի համայնքապետարանում (ք. Կապան, Չարենցի 1 հասցեում):

1-14 կետերի թափուր պաշտոնների մրցույթին մասնակցելու համար քաղաքացիները Կապանի համայնքապետարանի աշխատակազմ են ներկայացնում՝
ա) դիմում
2) քաղվածք աշխատանքային գրքույկից կամ տեղեկանք աշխատանքային գործունեության մասին
3) ինքնակենսագրություն.
4) անձնագրի կամ նույնականացման քարտի, բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթղթի, արական սեռի անձինք՝ նաև զինգրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի, նախադպրոցական ուսումնական հաստատության տնօրենի դեպքում հավաստագրի՝ բնօրինակները և պատճենները.
5) տեղեկանք՝ մշտական բնակության վայրից.
6)հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում).
7) մեկ լուսանկար՝ 3 X 4 սմ չափսի.
Մրցույթին մասնակցելու համար դիմած քաղաքացին փաստաթղթերը ներկայացնում է անձամբ՝ անձնագրով կամ անձը հաստատող այլ փաստաթղթով:

Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր ժամը 9:00-18:00-ն, բացի շաբաթ և կիրակի օրերին: Դիմումների ընդունման վերջին ժամկետն է՝ 2024 թվականի հուլիսի 8-ը մինչև ժամը 17:00-ը:

Մրցույթին մասնակցել ցանկացող քաղաքացիները տեղեկություններ ստանալու համար կարող են ծանոթանալ **azdarar.am** և **kapan.am** կայքերից, ինչպես նաև կարող են դիմել Կապանի համայնքապետարանի աշխատակազմ /ք. Կապան, Չարենցի 1, հեռ. 060720072, 060720074/ :

Կապան համայնքի ղեկավար ***Գևորգ Փարսյան***